ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Նախագծային ուսուցման մեթոդի արդյունավետությունը պատմության դասաժամերին
ԱՌԱՐԿԱ	Պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Խաչատրյան Ռուզաննա
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Նոննա Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2022

Բովանդակություն

Ներածություն----------3

Նախագծային աշխատանքի կազմակերպումը, կառուցվածքը----------5

Նախագծային աշխատանքի օրինակ «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման շրջանակներում----------11

Եզրակացություն----------13

Օգտագործված գրականության ցանկ----------14

Ներածություն

«Տվե՛ք երեխային հետաքրքրասիրություն: Գիտելիքը նա կգնի ինքը»:

Անատոլի Գին

Կրթության համակարգում տեղի ունեցող փոփոխությունների պայմաններում մեծանում են աշակերտի ակտիվ մասնակցությունը և ինքնուրույնությունը սովորելու գործընթացում: Այս մոտեցումը նոր պահանջներ է դնում ուսուցչի առջև՝ դասընթացի անցկացման, նպատակների և կրթության արդյունքների ձևավորման համար: Դասավանդող նյութի հեշտ յուրացումը աշակերտի կողմից կախված է ոչ միայն ընդունակություններից, այլև դասավանդմանմեթոդներից: Կրթության վերջնարդյունքի յուրաքանչյուր տեսակ առավել արդյունավետ է ձեռք բերվում դասավանդման որոշակի ձևերի ու մեթոդների կիարառմամբ:

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու և կրթության նպատակներն իրականացնելու համար նպատակահարմար մեթոդ է հանդիսանում նախագծահեն ուսուցումը: Այս մեթոդը ապահովում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը, ինչպես նաև հանդիսանում է աշակերտակենտրոն ուսուցման տարր:

Նախագծային ուսուցումը հնարավորություն է տալիս ստեղծել պայմաններ, որոնց շնորհիվ աշակերտները ինքնուրույն ձեռք են բերում գիտելիքներ տարբեր աղբյուրներից, սովորում օգտվել ձեռք բերված տեղեկատվությունից, զարգացնում խնդիրների բացահայտման, տվյալների հավաքագրման, դիտարկման, վերլուծության, համադրման միջոցներով, որի արդյունքում էլ ունենում են համակարգված մտածողություն:

Նախագծային մեթոդը չի սահմանափակվում դասարանային պարապունքներով, այս մեթոդը թույլ է տալիս աշակերտներին դուրս գալ դասարանի սահմաններից և կազմել սեփական գործողությունների նախագիծ՝ քննարկվող թեմայի շուրջ: Նախագծային ուսուցման ընթացքում օգտագործվում են տեղեկատվության տարբեր տեսակի աղբյուրներ, այդ թվում՝ գիտական գրականություն, տարբեր տեսակի փաստաթղթեր, վիճակագրական հրապարակումներ և այլն:

Նախագծային ուսուցման մեթոդը պատմության դասաժամերին հնարավորություն է տալիս գիտելիքը դարձնել կիրառելի: Աշակերտը լսողից դառնում է ակտիվ, հետազոտող, գործունեություն ծավալող մասնակից: Աշակերտն ազատ է գործունեության ձևի ու տեսակի մեջ, որն էլ զարգացնում է նրանց մոտ ինչպես ինքնուրույն, այնպես էլ թիմային աշխատանք կազմակերպելու հմտություն: Այն թույլ է տալիս կատարել խնդրի առաջադրում, տեղեկատվության որոնում, գիտելիքների օգտագործում, ըստ նշանակության, վերլուծություն, ինքնաներկայացում, ինքնակրթություն, հետազոտական և ստեղծագործական գործունեություն: Հենց դրանով էլ պայմանավորված է թեմայի **արդիականությունը**:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել նախագծային աշխատանքի առանձնահատկությունները և դրա արդյունավետ օգտագործումը պատմության դասաժամերին:

Նշված նպատակի իրագործելու համար մեր առջև դրեցինք հետևյալ խնդիրները.

- ներկայացնել դասավանդման ընթացքում նախագծային ուսուցման կազմակերպան կարևորությունը, կառուցվածքը,
- վերլուծել և բացահայտել պատմության դասերին նախագծի կիրառման առանձնահատկությունները, դասի արդյունավետության բարձրացման ուղիները,
- մշակել նախագծի նմուշ-օրինակ:

Աշխատանքի օբյեկտն ու առարկան: Հետազոտական աշխատանքի օբյեկտը պատմության դասավանդումն է, իսկ առարկան՝ պատմության դասերին ուսումնական նախագծի մշակման և իրականացման առանձնահատկությունների բացահայտումը:

Աշխատանքի մեթոդական հիմքեր: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել նյութերի վերլուծությունը, համադրումը, փորձարարությունը:

Հետազոտության փորձարկումն ու ներդրումը: Հետազոտությունը իրականացվել է Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3հ/դ:

Նախագծային աշխատանքի կազմակերպումը, կառուցվածքը

ՀՀ կրթական համակարգում արմատական բարեփոխումները վկայում են, որ ուսուցման պահանջվող որակի ապահովման հիմնախնդիրների լուծումը պայմանավորված է ուսուցման նորագույն մեթոդների կիրառումով: Գաղտնիք չէ, որ ուսուցման ավանդական մեթոդները, ավելի ճիշտ՝ գիտելիքներ սերտել տալու մեթոդներն այսօր չեն կարող ապահովել ուսման որակ և ստեղծարար կարողությունների զարգացում: Դասավանդողներն այսօր ուսուցման մեթոդների ընտրության մեծ հնարավորություններ ունեն: Խնդիրն այն է, թե մենք որքանով ենք տիրապետում ուսուցման ժամանակակից մեթոդներին, ուսուցման նպատակով մեր կողմից ընտրված կամ արդեն կիրառվող մեթոդները որքանով են համապատասխանում մեր դասավանդած առարկաների ուսումնական նպատակներին:

Նախագծերի մեթոդը (Project methods) ուսուցման համակարգ է, որի ընթացքում սովորողները գիտելիքներ, կարողություններ, հմտություններ են ձեռք բերում աստիճանաբար բարդացող գործնական նախագծերի պլանավորման և իրագործման ընթացքում: Համաշխարհային մանկավարժության մեջ այս մեթոդը նոր երևույթ չէ:

Նախագծային մեթոդը առաջացել է 20-րդ դարի 20-ական թվականներին, ԱՄՆ-ում կրթական բարեփոխումների շրջանում, ինչի արդյունքում կրթությունը դարձավ աշակերտակենտրոն: Այն կոչվում էր նաև *խնդիրների մեթոդ*, պրոբլեմների ուսումնասիրման մեթոդ, որը կապվում էր, նախ և առաջ, մարդասիրական խնդիրների ուսումնասիրման հետ: Այս մեթոդը մշակել են ամերիկացի փիլիսոփա, մանկավարժ Ջոն Դյուին և նրա աշակերտ Վ. Խ. Կիլպատրիկը:

Դյուին առաջարկում էր ուսուցման հիմքում դնել սովորողի ակտիվությունը՝ հիմնվելով սովորողի նպատակային գործունեության և անհատական հետաքրքրությունների վրա: Կարևոր է սովորողներին ցույց տալ իրենց անձնական շահագրգռվածությունը գիտելիք ստանալու գործընթացում. գիտելիք, որը կարող է և պետք է կիրառվի կյանքում: Ուսուցիչը կարող է հուշել տեղեկատվության նոր աղբյուրներ կամ պարզապես անհրաժեշտ ուղղությամբ տանել աշակերտի միտքը: Արդյունքում սովորողները պետք է ինքնուրույն, համատեղ ջանքերով հաղթահարեն դժվարությունը՝ օգտագործելով տարբեր առարկաներից համապատասխան գիտելիքը, հմտությունը՝ անհրաժեշտ արդյունք ստանալու համար:

Դյուին գրում է. «Երեխան կրկնում է մարդկության ճանաչողության ուղին, գիտելիքի յուրացումը սպոնտան, անկառավարելի գործընթաց է. երեխան յուրացնում է նյութը ոչ թե լսելով կամ ընկալելով զգայական համակարգով, այլ երբ զգում է այդ գիտելիքի կարիքը և յուրացման գործընթացի ակտիվ մասնակից է»:

Դյուին կրթության հաջողության գրավական է համարում.

- Ուսումնական նյութի պրոբլեմականացումը

- Երեխայի ակտիվությունը
- Կրթության կապը երեխայի կյանքի, խաղի, աշխատանքի հետ:
  Պրոբլեմային իրավիճակ ստեղծելու մեթոդական հնարքներ.
- ուսուցիչը երեխաների համար ստեղծում է հակասական իրավիճակ և ինքնուրույն ելքեր որոնելու հնարավորություն տալիս.
- ներկայացնում է նույն խնդրի շուրջ եղած տարբեր վարկածներ.
- առաջարկում է երևույթը դիտարկել տարբեր տեսանկյուններից.
- ստեղծում է այնպիսի դաշտ, որտեղ կլինեն համեմատություններ,
- ընդհանրացումներ, եզրահանգումներ, հարցադրումներ. տալիս է պրոբլեմային առաջադրանքներ [1]:

Տարիների ընթացքում նախագծային մեթոդն ունեցավ զարգացման և անկման փուլեր: 1905թ ռուս մանկավարժ Շացկին սկսեց լրջորեն զբաղվել այս մեթոդի ձևակերպումներով ու փորձարկումներով: Ռուսաստանում նախագծի մեթոդը դեռևս հայտնի էր 1905թ.-ից: Հեղափոխությունից հետո այս մեթոդը ուսումնական հաստատություններում սկսվեց կիրառվել Ն.Ա Կրուպսկայայի անմիջական հրամանով: Սակայն մեթոդը քննադատվեց և մինչև 20-րդ դարի 80-ականները չէր կիրառվում դպրոցներում: Ավելի ուշ՝ 1931թ., Խորհրդային Միությունում այս մեթոդը դատապարտվեց և արգելվեց:

Եվրոպական երկրներում էլ նախագծային մեթոդը տարերային զարգացում ունեցավ: Այժմ աշխարհում այս մեթոդին կրկին սկսել են լուրջ ուշադրություն դարձնել: Հիմնական ձևակերպումը հետևյալն է. «Գիտեմ, թե ինչի համար է ինձ պետք այն, ինչ ես սովորում եմ, որտեղ և ինչպես կարող եմ գործածել»:

Նախագծերի մեթոդն իր նշանակությամբ կարևոր տեղ է զբաղեցնում ուսուցման ժամանակակից մեթոդների շարքում, 21-րդ դարի նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներից է, որը թույլ է տալիս անհատականացնելու ուսումնական գործունեությունը, սովորողներին հնարավորություն է տալիս դրսևորելու ինքնուրույնություն իրենց գործունեության պլանավորման հարցում, տեխնոլոգիա է, որը ներառում է բազմաթիվ այլ մեթոդներ: [2]Նախագծային մեթոդի *առանձնահատկությունն* այն է, որ ուսուցումը կազմակերպվում է սովորողների նպատակային գործունեության միջոցով, ընդգծվում է կապը սովորողների կյանքի և առօրյայի հետ, ուսումնասիրության հիմնախնդիրները բխում են իրական կյանքից: Այս դեպքում անպայման կապահովվեն սովորողների հմտությունների, կարողությունների զարգացումը, տեղեկատվական դաշտում ճիշտ կողմնորոշվելու, քննադատական մտածողության զարգացումը: Փորձն ապացուցում է, որ նախագիծ մշակող և իրագործող սովորողները կարողանում են աշխատել խմբում, համագործակցել ընկերների հետ, կոնկրետ այս կամ այն խնդիրը լուծելու համար կիրառել տարբեր ոլորտներից ձեռք բերած իրենց գիտելիքները:[3]

Յուրաքանչյուր մեթոդ, որը կարող է նպաստել սովորողի կողմից գիտելիքներ յուրացնելուն, հմտություններ ձևավորելուն, ինքնին արժեքավոր է: Այս առումով հայրենագիտական և ուսումնական ճամփորդությունները պատմության դասաժամին ևս կարևոր ու տպավորիչ նախագծեր են՝ որպես ուսուցման մեթոդ՝ իրենց փուլերով, օրինաչափություններով:

Այստեղ նախագծի բուն նպատակներից մեկը սովորողի մեջ ուսումնասիրվող նյութի վերաբերյալ հետաքրքրություն առաջ բերելը և դրան գնահատական տալն է: Ճամփորդությունը պետք լինի նպատակաուղղված, զարգացնի սովորողի ճանաչողական ունակությունները, նպաստի բարոյական հատկանիշների ձևավորմանը, առաջացնի սեր հայրենիքի, նրա մշակույթի, պատմության, ինչպես նաև հարգանք հարևան ժողովուրդների նկատմամբ:

Նախագծի իրականացման ժամանակ անպայման աշխատում ենք կիրառել սովորողների՝ տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները: Այս խնդիրը հեշտ է լուծվում, եթե աշխատանքի բաժանումը կատարելիս ուղղորդվում ենք տարբեր առարկաներից սովորողների պատրաստվածության հաշվառմամբ:

Իհարկե, միայն նախագծային աշխատանքներով չեն լուծվում պատմության առարկայի ուսուցման հետ կապված խնդիրները, ուղղակի այն, ինչ չի կարելի անել այս մեթոդով, հնարավոր չէ անել ուսուցման գործընթացում կիրառվող մյուս մեթոդների միջոցով :

Նախագծերի մեթոդն անհատական կամ խմբային (համաշխարհային պրակտիկայում երկու սովորողից ավելի չի նշվում) աշխատանք է, որը սովորողներն իրականացնում են որոշակի ժամանակահատվածում: Հիմնականում ուղղված է որևէ վիճարկելի խնդրի հաղթահարմանը: Ենթադրում է հետազոտական, որոնողական, համադրական, ստեղծագործական կարողությունների խթանում: Համարվում է, որ այս մեթոդով աշխատող ուսուցիչը բարձր որակավորում ունեցող մասնագետ է և հմուտ մանկավարժ: Նախագծերի մեթոդն ունի մի շարք *առավելություններ*՝ սովորողների մոտ առավել լավ են բացահայտվում հետազոտական հմտությունները, իրականացվում է տեղեկատվության ինքնուրույն փնտրում ու փաստերի համադրում, տեքստի վերլուծություն և եզրահանգումների ձևակերպում: Այս մեթոդով աշխատելիս զարգանում են նաև այնպիսի *կարողություններ,* ինչպիսիք են՝ ինքնագնահատման կարողությունը, համագործակցման աշխատանքի հմտությունը, փոխօգնության պատրաստակամությունը, բանավիճելու ունակությունը, սեփական կարծիքի արտահայտման հաստատակամությունն ու խոսքի հիմնավորումը: [4]

Ուսուցման նախագծային մեթոդը թույլ է տալիս իրականացնել միջառարկայական, համագործակցային ուսուցում և դասավանդման ընթացքում ենթադրում է ՏՀՏ-ի օգտագործում:

Նախագծային մեթոդի *հիմնադիրները* առաջարկում էին ուսուցման հիմք ընդունել սովորողի ակտիվ գործունեությունը՝ հաշվի առնելով սովորողի անձնական հետաքրքրությունները կոնկրետ այդ թեմայի շուրջ: Էական նշանակություն ուներ այն, որ սովորողներին առաջարկվեն իրական կյանքից վերցված խնդիրներ, որոնք կարևոր են իրենց համար: Այս խնդիրների լուծման համար սովորողին անհրաժեշտ կլինի կիրառել ինչպես մինչ այդ ունեցած գիտելիքները, այնպես էլ նոր գիտելիքներ, որոնք նա ձեռք կբերի աշխատանքի ընթացքում:

Դասավանդողի դերը նախագծի իրականացման տարբեր փուլերում կարող է փոխվել: Բոլոր փուլերում էլ նա հանդես է գալիս որպես խորհրդատու, օգնական: Նա գիտելիքներ չի փոխանցում, այլ ապահովում է սովորողի ինքնագործունեությունը, այսինքն՝ խորհուրդներ է տալիս, հետևում է ընթացքին, ուղղորդում է…

Սովորողի դերը նախագծային աշխատանքում էապես տարբերվում է. պասիվ լսողից նա դառնում է ակտիվ մասնակից, հետազոտող, գործունեություն ծավալող: Նա ազատ է գործունեության ձևի ու տեսակի ընտրության մեջ:

Ծնված լինելով ազատ դաստիարակության գաղափարից՝ այսօր նախագծի մեթոդը ժամանակակից կրթական համակարգի անբաժանելի բաղադրիչն է:

Շատ հաճախ նախագիծ են անվանում սովորողի ցանկացած ինքնուրույն աշխատանքը՝ ասենք ռեֆերատը կամ հաշվետվությունը: Այսպիսի շփոթմունքից խուսափելու համար անհրաժեշտ է տալ նախագծի հստակ *սահմանումը*. նախագիծը ուղղված է կոնկրետ խնդրի լուծման՝ օպտիմալ ճանապարհով հասնելով նախօրոք նախատեսվող արդյունքներին: Նախագիծը կարող է ներառել ռեֆերատի, հաշվետվության, հետազոտության և սովորողների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքների այլ ձևեր, սակայն բացառապես որպես նախագծի արդյունքին հասնելու միջոց: [5] Կարճաժամկետ և երկարաժամկետ նախագծերում աշխատելիս սովորողները ձեռք են բերում նոր գիտելիքներ ու հմտություններ: Նրանք ստանում են այս կամ այն առաջադրանքը, ձևավորում խմբեր, ապա դասարանում և տանը՝ առկա, առցանց կերպով, կազմակերպում են նախագծի կատարման աշխատանքները: Որպես նախագծի ամփոփում՝ ներկայացնում են կոնկրետ արդյունքներ՝ տեսանյութ, աշխատանքի ցուցադրություն, համակարգչային ծրագրի յուրացում, հետազոտության փորձ և այլն: Նախագծի կատարման ընթացքը վերահսկվում է դասավանդողի կողմից, ով առկա և առցանց հետևում և մասնակցում է աշխատանքներին: Նախագծային աշխատանք կատարելը հարմար է հատկապես նախագծեր իրականացնելիս, որովհետև ժամանակ կա ուսումնասիրություն անելու:

Ինչպես սկսել նախագիծը

Նախագիծը սկսվում է մասնակիցների մոտիվացիայից: Մասնակիցներին հնարավորություն

տանք զգալու՝ ինչ ասել է իսկական թիմ, գրի առնենք և քննարկնեք յուրաքանչյուր մասնակցի արտահայտած գաղափար կամ միտք: Նախագծային աշխատանքներ իրականացնելու ընթացքում այդ երկխոսությունը անհրաժեշտ պայման է: Սովորողի կարծիքը հաշվի առնելը սկզբունք է, որն անպայման հարկավոր է հաշվի առնել: Սովորողների հետ միասին աշխատանքային ուղեցույց ստեղծենք, աշխատենք համատեղ ստեղծված աշխատանքային կանոնների համաձայն: Ընդհանուր համաձայնության գանք աշխատանքի ընթացքում առաջացած դժվարությունները հաղթահարելիս: Հաշվի առնելով մասնակիցների նախասիրություններն ու բնական հատկությունները՝ կատարենք աշխատանքի հնարավորինս հստակ բաժանում:

Նախագծի ղեկավարը կատարում է նախագծի նախնական պլանավորում, ապահովում է առաջնային գիտելիք պարունակող տեղեկատվությունը, որը կողմնորոշում է սովորողներին՝ ինչպես, ինչ ուղղությամբ սկսել աշխատանքը, տալիս է համացանցային հղումներ, գրքերի անուններ և այլ անհրաժեշտ նախնական տեղեկություն: Հետևում է նախագծի աշխատանքի ընթացքին և ավարտին է հասցնում նախագիծը՝ վերջնական արտադրանքի տեսքով:

Առարկայական ուսուցիչը ապահովում է սովորողի մասնագիտական խորհրդատավությունը: Օգնում է որոնել տեղեկատվական գրականություն, այլ նյութեր, մեդիանյութեր, օգնում է կոնկրետ հարցեր լուծելիս առաջացած դժվարությունները հաղթահարել, փոխանցել համապատասխան հմտություններ:

Նախագծային աշխատանքը հետաքրքիր է նաև նրանով, որ ընդհանուր գործ կատարելիս սովորողներն էլ ավելի են մտերմանում, փորձում են օգտակար լինել իրար, ընկերանում են, իրար ուսումնասիրում-բացահայտում են, իրարից սովորում են, գնահատում են «ընկերություն» կոչվածը, հասկանում են դրա առավելությունները: Մի խոսքով՝ նախագծի վրա աշխատելու ընթացքում առավել ցայտուն են դառնում սովորողի ունակությունները:

Նախագծային աշխատանքի առաջին փուլ

Ստեղծվում են աշխատանքային խմբեր: Նախագիծը իրականացնում են խմբով, անդամների միջև աշխատանքի բաժանում է լինում, խումբը ունենում է ղեկավար, որը նաև համակարգում է մյուսների աշխատանքը: Նախագծի կատարումը վերահսկելու համար կազմում են աշխատանքային ժամանակացույց՝ միջանկյալ արդյունքներով:

- գրանցվում են արդյունքին ներկայացվող պահանջները
- նախագծի խնդիրները արդյունքին հասնելու ճանապարհին հանդիպող դժվարություններն են:

Աշխատանքի երկրորդ փուլ

- նախագծի իրականացման ընթացքում կատարվում են հետազոտական աշխատանքներ

- նախագծի արդյունքի ներկայացում (արդյունքը պետք է ունենա հասարակական արժեք)
- աշխատանքների գնահատում
- ստացված արդյունքի համապատասխանությունը սկզբնական պահանջներին:

Աշխատանքի երրորդ փուլ

- նախագիծը ենթադրում է վերանայում
- ծրագրի կիրառման արդյունքում նկատված թերությունների, ստացված դիտողությունների, առաջարկությունների քննարկում և համապատասխան փոփոխությունների կատարում

Կատարված աշխատանքի ներկայացում

Սովորողը պիտի կարողանա.

- ներկայանալ և ներկայացնել
- համառոտ նկարագրել կատարված աշխատանքը. ինչ խնդիր են դրել, ինչպիսին է աշխատանքի արդյունքը, ինչու են ընտրել հենց այդ թեման, որն է նախագծի արդյունավետությունը
- խոսի նախագծի ընթացքում ծագած դժվարությունների կամ հակառակը՝ դյուրությամբ արված աշխատանքի մասին: Պիտի կարողանա հիմնավորել՝ աշխատանքի ընթացքում ինչն են համարում անարդյունավետ, իսկ ինչը՝ օգտակար:
- կոնկրետ ներկայացնողի համար որքանով է օգտակար այդ նախագծին մասնակցելը, ինչ սովորեց, ինչը ճշտեց, ինչ է կարողանում ավելի լավ անել աշխատանքը կատարելուց հետո, ինչը ինքը կկիրառի հետագայում: [6]

Իրական նախագծային աշխատանքի արդյունքում սովորողները ձեռքբերում պիտի ունենան՝ միասին ստեղծելով շոշափելի արդյունք:

Դասավանդողը սովորողների հետ միասին, նախագծերի արդյունքում, ուսումնական տարվա ընթացքում ստեղծում է ուսումնական նյութեր, առաջադրանքների և հարցաշարերի շտեմարան, ուղեցույցներ, ուսումնական մեդիափաթեթներ, ուսուցման այլ նյութեր, տեսանյութեր՝ դրանք հրապարակելով բլոգում, որպեսզի հասանելի լինի բոլորին:

Նախագծային աշխատանքի օրինակ «Հայոց պատմություն»

առարկայի դասավանդման շրջանակներում

Իմ դասավանդման ընթացքում՝ «Պատմություն» առարկայից նախագծային ուսուցմամբ դասընթաց կիրականացնեմ 8-րդ դասարանում: Նախագծի իրականացման նախնական փուլում աշակերտների հետ որոշեցինք նախագծի թեման՝ «Սյունիքի մարզի պատմաշխարհագրական դիրքի դերն ու նշանակությունը»: Շատ կարևոր է, որ ընտրված նյութը աշակերտների համար անպայման լինի հետաքրքրիր: Նախագծի նպատակն էր բացահայտել մեր մեր մարզի գերակա խնդիրները, ներդրումային ծրագրերը, ռազմավարական նպատակները, ձևավորել՝ սեր և հոգատարություն մարզի բնության պատմամշակութային հուշարձանների, եկեղեցիների, վանքերի, մշակույթի կենտրոնների նկատմամբ, բարեվարքություն համայնքի նկատմաբ, զարգացնել սովորողների մեջ հայրենասիրություն, ակտիվություն, ինքնուրույնություն, ազնվություն, բարություն, հաստատակամություն, նպատակասլացություն, վերաբերմունքի ու վարքագծի ճիշտ դրսևորումներ:

Հաջորդ փուլում ձևավորեցինք 4 հետազոտական խմբեր՝ ըստ ոլորտների:

1-ին խումբ՝ բնապահպանության բաժին՝ ներկայացնելով մարզի հետ կապված ծրագրերն ու միջոցառումները:

2-րդ խումբ՝ կրթության, սպորտի և մշակույթի բաժին: Ներկայացնեն պատմամշակութային հուշարձանները, եկեղեցիները, թատրոնները, ուսումնական հաստատությունները, մշակույթի կենտրոնները և նախատեսած ներդրումային ծրագրերը ու միջոողառումները:

3-րդ խումբ՝ ճանապարհաշինարարության բաժին: Ներկայացնեն միջպետական և համապետական նշանակության ճանապարհները, երկաթուղու դերը, Արցախի հետ կապող ճանապարհի փակման ազդեցությունը և նախատեսված ներդրումային ծրագրերն ու միջոցառումները:

4-րդ խումբ տարածքային կառավարման բաժին: Ներկայացնեն քաղաքները, խոշոր գյուղերը, համայնքներում գերակա խնդիրները, համայնքների կարևորությունը ծրագրերի և միջոցառումների իրականացման համար:

Դասարանից ընտրվեց մարզպետ և փոխմարզպետ, որպես նախագծի ղեկավարներ, որոնք հսկում և կարգավորում էին ամբողջ աշխատանքը: Յուրաքանրյուր խմբից էլ ընտրվեց մեկական ղեկավար, ով ուղղորդում էր խմբի աշխատանքը: Խիստ կարևոր էր հենց սկզբից հստակ սահմանել նախագծի յուրաքանչյուր մասնակցի խնդիրն ու կատարելու ժամկետը: Մենք կազմել էին մոտավոր ժամանակացույց, որում նշվել էին յուրաքանչյուր փուլի ավարտի ժամկետը և ակնկալվող արդյունքները: Խումբն էլ իր հերթին բաժանեցինք չորս ենթախմբի: Առաջինը հավաքեց տեղեկություն պատմական աղբյուրներիցու համացանցից,

երկրորդը կատարեց այց մարզպետարան, երրորդը՝ հավաքած տեղեկությունները մշակեց և խմբավորեց, իսկ չորրորդը՝ պատրաստեց շնորհանդես: Ամբողջ աշխատանքը վերահսկվում էր մարզպետի և փոխմարզպետի կողմից, տրվում էր ցուցումներ: Արդյունքների ներկայացման փուլում նախքան խմբերը կներկայացնեն իրեն աշխատանքները, մարզպետը և փոխմարզպետը ողջունեցին իրենց աշխատակիցներին և տեղեկացրին, որ լավագույն առաջարկած ներդրումային ծրագիրը կարժանացնեն պարգևատրման: Խմբերը ներկայացրին իրենց նյութերը: Կատարվեցին քննարկումներ: Մարզպետը լավագույն ներդրումային ծրագրի ճանապարհաշինարարության բնագավառում արժանացրեցին 3-րդ խմբին: Խումբը խոստացավ իկատար աշել նախագիծը: Գնահատվեց սովորողների ջանքերը: Նրանց ստեղծագործական ունակությունները, տեղեկատվական աղբյուրների օգտագործման որակը, հաշվետվության որակը: Կատարվեցին առաջարկություններ հաջորդ նախագծային աշխատանքում թերությունները շտկելու համար:

Հարկ է նշել, որ այս մեթոդը հնարավորություն տվեց համախմբել սովորողներին մեկ նպատակի շուրջ, ձևավորել աշխատասիրություն և աշխատանքի արդյունքը ներկայացնելու կարողություն ու հմտություն: Սովորողներից յուրաքանչյուրը մեծ ոգևորությամբ ու պատասխանատվությամբ էր կատարում իրեն հասանելիք աշխատանքը: Նախագծային աշխատանքի կատարումը մեծ բավականություն պատճառեց մեր աշակերտներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իմ փորձառությունից ելնելով, կարող եմ ասել, որ նախագծային աշխատանքը հետաքրքիր է, օգտակար և հեռանկարային, եթե ճիշտ է ընտրված թեման, ճիշտ է հաշվարկված ժամանակը, և ճիշտ է մատուցման ձևը: Նախագծային մեթոդի իրականացումն արդյունավետ եմ համարում, երբ խմբում կան 5-7 սովորող. Այս դեպքում աշխատանքը վերահսկելի, կոնկրետ, նպատակային ու տեսանելի է: Այն հնարավորություն է տալիս ունենալու ստեղծագործ, որոնող աշակերտ և անընդհատ կարդացող-մտաշող-սովորող ուսուցիչ: Սովորողի աշխատանքն ինքնին կարևոր է և գնահատելի, թափած ջանքը՝ ուշադրության արժանի: Աշխատանքի ընթացքում են սովորում. նախագծային աշխատանքը հենց սովորելու գործնական հնարավորություն է: Հնարավորություն, որը կարող է տանել դեպի նոր բացահայտում: Արդյունքում կարևորում են փաստարկված սեփական կարծիքը, անկեղծությունն ու կենդանի խոսքը, նյութերի գրագետ օգտագործումը (համապատասխան հղումներ, ծանոթագրություններ), փաստերի համադրման հմտությունը, այնպիսի նյութ ստեղծումը, որի շատ մասեր հայերեն թարգմանություն չեն ունեցել և թարգմանել է սովորողը: Կարևորվում է նաև աշխատանքի գրագետ, տեսանելի, ընթեռնելի ներկայացումը:

Իմ դիտարկումները ցույց տվեցին, որ դասավանդման գործընթացում նախագծային ուսուցումը շատ առավելություն ունի, այդն դասավանդման մեջ կմտցնի բազմազանություն, իսկ աշակերտների մեջ՝ հետաքրքրություն: Նախագծային ուսուցման ընթացքում աշակերտը օբյեկտիվորեն ոն գնահատում իր և իր ընկերների գիտելիքները են առնվում խմբի մյութ անդամների կարծիքները, ինչու չէ նաև կարևորում են սեփական անձը:

Այսպիսով՝ նախագծային գործունեության մեջ ինքնակրթության և ինքնազարգացման մեխանիզմը գործողության մեջ է դրվում ձևավորված ակտիվ ճանաչողական հետաքրքրությունների և անձի զարգացման մակարդակի միջև առկա հակասությունների միջոցով: Այդ հակասությունը ծնվում է հետաքրքրությունները բավարարելու պահանջից: Նախագծային մեթոդն էլ թերևս նպաստում է հետաքրքրությունների առաջացման և դրանց բավարարման ճանապարհների մշակմանն ու հաղթահարմանը: Նախագծային աշխատանքը, որպես կանոն, հանգեցնում է նյութական պրոդուկտի ստեղծման:

Իմ դիտարկումները ցույց տվեցին, որ դասավանդման գործընթացում նախագծային ուսուցումը

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ջոն Դյուի, Դպրոցը և հասարակությունը, Դպիր մանկավարժական հանդես, Երևան, 2008:
2. Մովսիսյան Ն., Ուսուցման նախագծային մեթոդ, Մանկավարժական հանդես, Երևան, 2013:
3. Նավասարդյան Ս., Սահակյան Լ., Նախագծային մեթոդը որպես սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման միջոց, ՀՀ ՀԿՆ Կրթության ազգային ինստիտուտ, Մանկավարժություն, Երևան, 2008:
4. Սարգսյան Ե., Նախագծերը ուսուցման արդյունավետ միջոց, Մխիթար Սեբաստացի կրթահամալիր, Մանկավարժական հանդես, Երևան, 2013:
5. Կարողությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար կիրառական ուղեցույց, հատոր 3, Եվրոպայի խորհուրդ հր., Երևան
6. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Երևան, 2020: